

փառքը երկարութեամբ իջնում են մինչեւ ուսերը: Գլխի չուրջը բոլորակ, դեղին, խաչադարձ մեծ նիւթուս: Յիսուսի յետեւից բնթանում են երկու հոգի, մէկը դեղին մեծ նիւթուսով եւ զորշ, ալեխառն բոլորակ մկրուքով, որ Պետրոսն է, կարմիր վերնագլխատով. միւսը առանց նիւթի, սեւ մազերով եւ մորուքով, ձեռքը ազօթողի նման բարձրացրած, երեւի, ժողովրդի ներկայացուցիչ: Պատկերի յետեւի տարածութեան երկու կողմից մի մի ձիթենի, բունները ողորկ եւ բարձր. երեւում է որ նկարիչը ձիթենի չէ տեսել. տաճարին մօտ ձիթենու բունին երկու ոտքով փաթաթուել է մի փոքր մարդ, դէմքը փշացած, երկու ձեռքերը տարածել է ազօթողի նման, բայց մատներին մէջ ձիթենու մի մի փոքրիկ ճիւղ բռնած. նա հագել է մարմնին պլուսած բաճկոն, նեղ անդրափարտիկ եւ անկրունկ կօշիկներ: Դէմքը փշացած է:

Նոյն ծառին՝ աւելի բարձր ճիւղերի վերայ երեւում են երկու ֆիգուրներ. զոյանից մէկը մի ձեռքով բռնել է ձիթենու ճիւղը, միւսով տապարը ձեռքին կտրւում է եւ ցած թափում. նա հագել է կարմիր բաճկոն մինչեւ օտները հասնող, զօտեւորած, եւ ապա նեղ անդրափարտիկ, ներքեւի մասը սեղմ եւ կորները զարգարուն. թևերի վերայ բազպաններ: Մի այլ երիտասարդ երեսը դարձրել է դէպի ձախ եւ ձեռքը մեկնած, խօսում է երկու մատաղահաս աղջիկների հետ, որոնք նոյնպէս ձեռքները նրան են մեկնել, խօսելու շարժումով: Մի երրորդ կին գտնւում է սիւնադարձ գմբեթի տակ, շէնքի վերնայարկում, ձեռքերը ծածկած վերնագլխատի փեշերով, ձիթենու ճիւղ է բռնել: Կանանց հագուստի ամբողջութիւնը չի երեւում, բայց գլխի եւ կրծքի մասերը պարզ են. երկու մատաղահաս աղջիկները, որոնք խօսում են երիտասարդի հետ, գլխներին ունին թևթև եւ բոլորակ զօտիկ, գլխի յետեւի կողմից բարակ շղարշ ձգած, որ կապուած է թևթևակի յետեւի կողմից. զօտիկի գագաթն էլ զարգարուն: Երեւում են նրանց ներքնազգեստի նեղ թևերը, բազկի մօտ աւելի սեղմուած. ներքնագլխատի վերայից ձգուած է բարակ եւ արձակ վերնագլխատ: Գմբեթի տակի կներ

գլխին նոյն զօտիկն ունի. միայն պարանոցի տակից կապուած է մի լաթով, իսկ լաչակն իջնում է ուսերի վերայ: Աղջիկների գլխի կապն ու զարդը յիշեցնում է Լեոն Գ.ի եւ Կեռանի աղջիկներին, միայն ոչ նոյնչափ շքեղ, կամ նման է ներկայումս Ախալցխայի եւ աւելի մօտ Փամբակի կանանց գլխի զարդարանքին: Նոյնն է եւ բռնաւորի կնոջ Տղատիկնոջ գլխի զարդարանքը, որ հրատարակել է Հացունին իւր Հայ Տարազի մէջ, եր. 218 եւ մենք Իգնատիոս Մանրանկարիչ եւ Շոթոպանց Տոհմը աշխատութեան մէջ (Սիոն, 1933, եր. 274): Ծառի վերայից աղջիկների հետ խօսող երիտասարդը ճիւղ նոյն զգեստն ու կօշիկներն ունի, ինչ որ ձեռք բերող Շևրենիկն ունէր, միայն առանց գլխարկի եւ կողքից կախուած թաշիկնակի, ասել է, թէ որոշ դասի երիտասարդներին յատուկ զգեստ էր այդ: Երկրորդ ձիթենու վրայ եւս մի պատանի է բարձրացել եւ կացնով ճիւղեր է կտրատում. նա հագել է մինչեւ զօտին հասնող ելակ. նորա տակից ծալքաւոր բաճկոնակ, որ մինչեւ ծնկներն է հասնում, ապա նեղ եւ կարմիր անդրափարտիկ, ուղքների մօտ սեղմ եւ զարգարուն, զուցէ եւ փաթթանով պատած. ոտքերը անկրունկ եւ առանց ճիւղի կօշիկ, զուցէ տրեխ:

Ամբողջ մանրանկարն առնուած է գրնգակների շարքից բաղկացած եւ երկու գծով եզերուած շրջանակի մէջ:

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊՈ. ՅՈՎՍԷՓԵԱՆ

(Շարունակելի)

ԽՈՐՀԱՆՈՒՐԳ ԵՒ ԽՍՈՒՐ

Մարդը կենդանիին ու տունին բաներ մը ունի իւր մէջ. ի՞նչպիսի ուրանալ աւիկա: Բայց անոնց վրայ կ'աւելցնէ անկիւս բանականութիւնը, բարոյական ազատութիւնը, անշահախնդիր սէրը, արուեստը, բանաստեղծութիւնը, գիտութիւնը, կրօնական զգացումը: Անոր քրքրելիքները քոյլ կուտայ իրեն յաւանդու անկունը՝ աստուծայինը, զաղափարականը, ձգտելու կասարկութեան եւ ճշնայուն անվանութեան: